



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴՍԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ 1640/02/16թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան
Դատավորներ՝ Ն.Գրիգորյան
 Հ.Խաչատրյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ 1640/02/16թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

30 մայիսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Ա.Աբրահամյանի
Գ.Արզումանյանի
Ի.Կարապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Արմեն Վազգենի Բալայանի և Սերյոժա Վազգենի Բալայանի ընդդեմ Միեր Ռազմիկի Մուսայելյանի՝ պատճառված նյութական վնասը փոխհատուցելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. մարտի 15-ի որոշման դեմ հայցվորներ Արմեն Վազգենի Բալայանի, Սերյոժա Վազգենի Բալայանի և նրանց ներկայացուցիչ Ռաֆիկ Երվանդի Ավանեսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

2016թ. օգոստոսի 8-ին Արմեն Բալայանը, Սերյոժա Բալայանը և նրանց ներկայացուցիչ Ռաֆիկ Ավանեսյանը հայց են ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի

դատարան/ ընդդեմ Միեր Ռեզոլուցիայի Մուսայեյանի՝ պատճառված նյութական վնասը փոխհատուցելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2016թ. նոյեմբերի 10-ի վճռով Արմեն և Սերյոժա Բալայանների հայցը մերժվել է:

Վերոնշյալ վճռի դեմ բերված Արմեն և Սերյոժա Բալայանների վերաքննիչ բողոքը ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2017թ. մարտի 15-ի որոշմամբ մերժվել, Առաջին ատյանի դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ 2017 թվականի ապրիլի 14-ին Արմեն և Սերյոժա Բալայանները բերել են վճռաբեկ բողոք, որը 2017 թվականի մայիսի 10-ին ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրության 44-րդ և 45-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 331-332-րդ հոդվածների, 337-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, սխալ է մենկաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածը, չի կիրառել կիրառման ենթակա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 17-րդ, 345-րդ, 347-րդ, 352-րդ և 408-րդ հոդվածները:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Առաջին ատյանի դատարանը գործն ըստ էության չի քննել, հայցը մերժել է հայցային վաղեմության ժամկետը լրանալու պատճառաբանությամբ, այն էլ՝ միայն պատասխանող Մ.Մուսայեյանի իրարամերժ ու հավատ չներշնչող ցուցմունքների հիման վրա: Մինչդեռ, սույն գործով հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պետք է համարել ոչ թե 2013 թվականի հունիսի սկիզբը, այլ 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները, քանի որ պայմանավորվածության համաձայն, պատասխանող Մ.Մուսայեյանը մատուցված ծառայությունների դիմաց պետք է վճարեր հենց այդ ժամանակ: Վերաքննիչ դատարանը, վճիռը թողնելով առանց փոփոխության, այդ ամենը հաշվի չի առել: Հաշվի չի առնվել, որ Մ.Մուսայեյանը, չարաշահելով իրենց վստահությունը, խաբեության միջոցով հափշտակել է իրենց կատարած աշխատանքի դիմաց հասանելիք վարձատրության գումարը, ինչպես նաև իրենց կողմից գնված դիզվառելիքի և խոտի կիպ կապելու քողերի գումարները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2017 թվականի մարտի 15-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն գործով հայցի հիմքում դրված են հետևյալ փաստերը.

1. 2013թ. ամռանը, բանավոր պայմանավորվածության համաձայն, հայցվորներն իրենց գյուղտեխնիկայով, իրենց կողմից գնված դիզվառեվիքով և խոտի կիպ կապելու քողով պատասխանողի համար կապել, նրան են հանձնել 1270 հատ խոտի կիպ՝ յուրաքանչյուրը 170 ՀՀ դրամ, ընդամենը 215900 ՀՀ դրամ արժողությամբ, որի դիմաց պատասխանողը պետք է վճարեր դրանք իրացնելուց հետո՝ 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Հետագայում Մ.Մուսայելյանն իրենց կապած կիպերը լրիվությամբ վաճառել է, սակայն տարբեր պատճառաբանություններով ձգձգում, գումարն իրենց չի վճարում:
2. Պատասխանողը հայցը չի ընդունել ու պատճառաբանել է, որ ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ վճարումը պետք է կատարվի աշխատանքները կատարելուց անմիջապես հետո, հետևաբար՝ լրացել է հայցային վաղեմության ժամկետը, ու հայցը ենթակա է մերժման այդ հիմքով:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել կողմից բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելով վճարել կողմը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով հայցի հիմքում դրված փաստերի համաձայն՝ 2013թ. ամռանը, բանավոր պայմանավորվածության համաձայն, հայցվորներն իրենց գյուղտեխնիկայով, իրենց կողմից գնված դիզվառեվիքով և խոտի կիպ կապելու քողով պատասխանողի համար կապել, նրան են հանձնել 1270 հատ խոտի կիպ՝ յուրաքանչյուրը 170 ՀՀ դրամ, ընդամենը 215900 ՀՀ դրամ արժողությամբ, որի դիմաց պատասխանողը պետք է վճարեր դրանք իրացնելուց հետո՝ 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Հետագայում Մ.Մուսայելյանն իրենց կապած կիպերը լրիվությամբ վաճառել է, սակայն տարբեր պատճառաբանություններով ձգձգում, գումարն իրենց չի վճարում:

Պատասխանողը հայցը չի ընդունել, պատճառաբանելով, որ ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ վճարումը պետք է կատարվեր աշխատանքները կատարելուց անմիջապես հետո, հետևաբար՝ լրացել է հայցային վաղեմության ժամկետը և խնդրել է կիրառել հայցային վաղեմություն:

Առաջին ատյանի դատարանը հայցը մերժել է այն հիմքով, որ հայցվորները բաց են թողել հայցային վաղեմության ժամկետը, որի կիրառման մասին դիմել է պատասխանող կողմը: Վերաքննիչ դատարանը համաձայնել է Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունների հետ՝ հաստատված համարելով, որ պատասխանողը կատարած աշխատանքի դիմաց պետք է վճարեր աշխատանքները կատարելուց անմիջապես հետո: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ «չի կարող արժանահավատ համարվել կատարած աշխատանքի դիմաց վճարման ժամկետի

վերաբերյալ հայցվորների այն հայտարարությունը, որ իրենք պատասխանողի կողմից պարտավորության կատարման ողջամիտ ժամկետը համարել են 2013թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները, քանի որ բացի բանավոր հայտարարությունից հայցվոր կողմը, ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, դրա վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել և նշված փաստը վիճելի է մնացել գործով»:

Ուստի, սույն բողոքի քննության շրջանակներում վճռաբեկ բողոքի հիմքի իրավաչափությունը պարզելու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ վերաբերելի օրենսդրական կարգավորումներին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Նույն օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

Նույն օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ, իսկ 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է այդ ժամկետի հաշվարկման կարգն այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ, կամ որոշված է ցպահանջ: Մասնավորապես, վերոնշյալ օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են օրենսգրքով և այլ օրենքներով: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ: Նշված պարտավորությունների համար հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, ապա՝ այդ ժամկետի ավարտից հետո:

Օրենսդրի կողմից ամրագրվել են նաև այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում հայցային վաղեմության ընթացքն ընդհատվում է: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող

գործողությունները կատարելով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 141-145-րդ հոդվածների պահանջների, գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով գործը դատաքննության նախապատրաստելու ուղղությամբ դատավարական գործողություններ չի ձեռնարկել: Մասնավորապես, վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը չի պարզվել, գործով ապացուցման առարկան չի որոշվել, ապացուցման պարտականությունը կողմերի միջև չի բաշխվել: Մինչդեռ, մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքների ապահովման նպատակով գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է հստակ պատկերացում ունենա գործի լուծման համար նշանակություն ունեցող այն հանգամանքների մասին, որոնք ապացուցելու պարտականությունը կրելու է: Այդ հանգամանքները չեն պարզվել նաև դատաքննության ընթացքում, հայցային վաղեմության հաշվարկի վերաբերյալ հայցվոր կողմի փաստարկներն ընդհանրապես անտեսվել են, գործում առկա ապացույցները համակցության մեջ չեն հետազոտվել ու չեն գնահատվել: Ավելին, գործով ըստ էության քննություն չի իրականացվել, կողմերի իրավահարաբերությունները չեն պարզվել: Մինչդեռ, Գերագույն դատարանի գնահատմամբ, հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով հայցը մերժելու հիմքը չի կարող մեկուսացված լինել գործի փաստական հանգամանքներից և դրանց նկատմամբ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերից: Հայցը մերժելու նշված հիմքի առկայությունը որոշակիորեն պայմանավորված է վիճելի իրավահարաբերության ճիշտ որակմամբ, դրա առանձին տարրերի՝ սուբյեկտի, օբյեկտի և բովանդակության բացահայտմամբ: Քանի դեռ դատարանը չի պարզել կիրառելի օրենսդրության հարցը, նյութական իրավունքի նորմերով արժևորվող փաստերի շրջանակը, չի վերլուծել կողմերի փոխհարաբերություններում առկա պայմանագրային դրույթները, չի պարզել օբյեկտիվ իրավունքի կամ պարտականության ծագման պահը, չի կարող եզրահանգման գալ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահի վերաբերյալ:

Նման հանգամանքներում վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր ու բավարար է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային

կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. մարտի 15-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ